
**ՈՃԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ
ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Ա.

Փալատոս Բուզանդը հինգերորդ դարի նշանավոր մատենագիրներից է, նրա երկը՝ կենդանի գրույց-հիշատակարան՝ համեմված ժողովրդական գեղեցիկ ու սքանչելի բառ ու բանով, զարդարված նրբաճաշակ համեմատություններով ու փոխաբերություններով, դրվագված անգուգական կերպարներով ու զգայական, տեսանելի պատկերներով:

Բուզանդի երկի լեզվի և ոճի մասին գրել են շատերը: Դեռևս XIX դ. այս հարցին անդրադարձել է անվանի հայագետ Ա. Այտընյանը: Նրա գնահատմամբ, հայ հին մատենագրության մեջ կան հիշատակարաններ, որոնք աչքի են ընկնում հին Հայաստանի աշխարհիկ լեզվով: Դրանցից առաջինը Փ. Բուզանդի պատմության գիրքն է, որի լեզուն ոսկեդինիկ գրաբարն է, ոճը՝ «ամենեւին արեւելեան»¹: Այս նույն միտքն է արտահայտում նաև Մ. Աբեղյանը. «Նրա լեզուն հարազատ, մաքուր հայերեն է առանց խորթ օտարաբանությունների, մեծ մասամբ բնիկ ժողովրդական ձևով...»²: Հր. Աճառյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ մեսրոպյան շրջանում ծնունդ առած հեղինակային և թարգմանական երկերը, ըստ իրենց ոճական առանձնահատկությունների, բաժանել է չորս դասի՝ Եզնիկյան, Եփրեմյան, Կյուրեղյան, Ագաթանգեղյան: Ագաթանգեղյան դասին է վերագրում Ագաթանգեղոսի, Կորյունի, Բուզանդի, Մակաբայեցիների և Եվթաղի երկերը՝ դրանց ոճը համարելով «պերճ, բազմազարդ, մթին և հաճախ անկանոն»³:

Բուզանդի լեզվի և ոճի վերաբերյալ հայագետների հետագա բնութագրումները ըստ էության հիմնված են վերոհիշյալ տեսակետների վրա: Դրանց հետևողությամբ, Վ. Առաքելյանը գրում է. «Բուզանդի լեզուն չորրորդ և հինգերորդ դարի խոսակցական հայերենն է՝ իր բառապաշարով, սեղմ բանաձևումներով, աշխույժ ու շարժուն ընթացքով»⁴:

Լեզուն և ոճը սերտորեն կապված հասկացություններ են: Յուրաքանչյուր անհատի լեզվամտածողությունն արտահայտող հիմնական միջոցը լեզուն է: Այն գեղարվեստական երկի շինանյութն է, իսկ ոճը՝ լեզվական միջոցների համակարգը, որի շնորհիվ բացահայտվում են տվյալ հեղինակի անհատականությունն ու ինքնատիպությունը⁵: Հինգերորդ դարի մեր մատենագիրներից յուրաքանչյուրն իր

¹ Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1987, էջ 58-59:

² Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ., Ե., 1968, էջ 191:

³ Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951, էջ 78:

⁴ Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 167:

⁵ Եզնիկյան Լ., Ոճագիտություն, Ե., 2007, էջ 11:

ժամանակի ազգային լեզվամտածողության տարբեր շերտերի կրողն է: Բուզանդի երկի յուրահատկությունն ավանդագրությունների ու առասպելների քաջ իմացությունն է և դրանք պատմական փաստերի հետ զուգակցելու հմտությունը: Պատահական չէ, որ Բուզանդ նշանակում է գրույցների մեկնություն կամ գրույցների մեկնիչ, Բուզանդարան՝ գրույցների ժողովածու⁶:

Բուզանդի պատմության լեզվական առանձնահատկություններն ի հայտ են գալիս նախ և առաջ ժողովրդական ավանդապատումներում: Հայ ժողովրդի հոգևոր գանձարանից քաղված այս պատմադրական ու պատմագրի անըստգյուտ ձիրքը հնարավորություն էին տալիս դարաշրջանի քաղաքական և բարոյահոգեբանական մթնոլորտն արտացոլել բնական ու խորքային վերլուծություններով: Այս իմաստով նա հանձարեղ իմաստասեր ու հմուտ բանագետ է, ինչն էլ պայմանավորում է Բուզանդի լեզվի պարզությունն ու ժողովրդախոսակցական բնույթը: Հատկանիշներ, որոնք դրսևորվել են ոճական տարբեր արտահայտչամիջոցների օգնությամբ: Բուզանդի երկում դրանցից առավել հաճախադեպ են փոխաբերությունը, համեմատությունը, մակդիրը, կրկնությունը, ավելադրությունը, փոխանունությունը, աստիճանավորումը և չափազանցությունը:

Բուզանդը փոխաբերությունների գործուն կիրառմամբ արտահայտում է իր դրական կամ բացասական վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ: Առօրյա-գործածական բառերը երկում դառնում են ոչ սովորական՝ իրենց արտահայտչական նրբին երանգներով: Խոստուն կապակցությունների անբաժան մաս են կազմում սովորական բառերը՝ աչք, ականջ, թև, երես, հոգի ու միտք, ինչպես՝ «Բսկ հլուացն, որոց **ականջք սրտիցն բացեալ էին**, զոտսա բանիւք քարոզութեանն ածէր ի հաւանութիւն»⁷, «Բայց եթէ նա ստեաց, նոյն **աւետարանն ածէ զնա առ ոտն ձեռք**» (256), «Իբրև զսի ի ծառայիցն իմոց համարի զինքն. **հող ոտից իմոց ջանայ լինել**» (256), «Եւ որոց **իցեն աչք մտաց**, եւ չեն կուրացեալ ի հաւատոցն ճշմարտութենէն...» (134), «Բսկ որ լուսաւորեալք են տեսանելեաց **աներեւոյթ սրտին աչօք...**» (134), «զի ոչ գտանէր ուրէք նման նմա գեղեցկութեանն **ի վերայ երեսաց երկրի** (108)», «...եւ վերամբարձ **ի թեւս սուրբ Հոգւոյն թոչել**» (132) և այլն:

Բուզանդը քիչ տեղ չի հատկացնում այն մակդիրներին, որոնք, դրվելով գոյական մակադրյալների վրա, դառնում են զգացման, հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներ: Միայն գեղարվեստական խոսքում կարող են հնչել անձնավորման երանգով իմաստավորված հետևյալ կապակցությունները՝ «արեգակն արդարութեանն», «զմէզ տգիտութեանն» (132), «դառն մեղս» (392), «ի դառն կապանացն» (156), «սուրբ զոսկերսն» (48), «սուրբ ժողովոյն» (120), «յամբարիշտ աշխարհէ» (332), «պայծառ վարք» (108), «յուսով բարութեամբն» (116), «զնոյնահաս

⁶ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 418:

⁷ Նույն տեղում, էջ 116: Այսուհետև Բուզանդի երկից կատարված մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

պտուղս վարդապետութեան», (116), «զհոգևոր արօտս ջամբելով», (118), «հոգևոր ցօղոյն գիտութենէ ըմպել» (22), «վարդապետութեանն անձրևաւն սնուցանել» (116), «բարբարոս խուժադուժ միտս» (54) և այլն:

Պատումի անբաժան տարրերից են համեմատությունները, որոնք վկայում են հեղինակի գեղագիտական բարձր ճաշակի, հարուստ ներաշխարհի մասին: Ոճական այս հնարքի առատությունը Բուզանդի լեզվի էական հատկանիշներից է: Ամեն մի տողը մի ամբողջական պատկեր է՝ գունեղ, շքեղահյուս, որտեղ երևում են գեղագետ-պատմագրի հոգու թռիչքը և մտքի ճախրը: Համեմատության եզրեր են դառնում երկնքի աստղերը, ծովի ավազը, եղեգնի բոցը և այլն: «Այլ կացցեն ի հաւատս անշարժ, **իբրեւ զվէմ**» (24), «...զի ոչ գոյր թիւ բազմութեանն. զի էին **իբրեւ զաստեղս երկնից**, եւ **իբրեւ զաւազ առ ափն ծովու**», (34), «Զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց ի գնդէն ելանիցէր եւ ի նշանացն, **իբրեւ ի հուրն հրդեհի** այնպէս անցանէր ընդ գունդն **որպէս բոց ընդ եղէգն**» (310), «...եւ քաղցր է նա **քան զմեղու խորիսիս**» (136), «Եւ ելանէր ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Թեկդէս զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլք **որպէս ի լուսոյ** հատանէին ի նմանէն» (160), «Այսպէս յարձակէին **որպէս զլեռն** մի բարձր եւ կամ **որպէս զաշտարակ** մի հաստաբէստ հզօր և անշարժ» (308), «Եւ նոքա **իբրեւ ի բերդ ամուր** դիմէին ի լեզէն, ի զօրսն վահանաւորս» (308), «...զծերութեան պատինն պատուակալ պատուականութեանն զհանճարոյն զուարթութեան **անուշութեան, իբրեւ զծաղիկ...**» (50), «...**իբրեւ զփայլակն սլացեալ լինէր** անաշխատ « (60), «Արդարն իսկ **իբրեւ օձի քարբի...** դու խցեր զականջս, եւ կափուցեր զլսելիս, զի մի՛ լուիցես զօգտակարս բարբառոց զաստուածեղէն բանիցն խրատուն» (188):

Բուզանդը նաև տաղաչափական արվեստի գիտակ է: Գործածում է ոճական այնպիսի հնարներ, որոնք բանաստեղծական երանգավորում են ստեղծում: Մատենագրի լեզվին մի առանձին արտահայտչական թարմություն են հաղորդում երկում գործածված տարբեր բառերի, նախդիրների ու նախադրությունների, շաղկապների հաճախակի կրկնությունները՝ ստեղծելով չափածո խոսքին բնորոշ հանգեր: Կան հատվածներ, որոնք ուղղակի հեղեղված են դրանցով. այդպիսով Բուզանդը կարծես կամենում է ընդգծել տվյալ միտքը, գաղափարը, երբեմն էլ շեշտել կամ հաստատել պատմական խառնակ ժամանակների, անմիտ թագավորների, «չեպիսկոպոսների» ու «չերեցների» հանդեպ ունեցած իր գայլությունը: Առատորեն հանդիպող կրկնությունները նաև երաժշտականությամբ են օժտված: Ասես ականջիդ մի մեղեդի է հնչում՝ «քաղցր եղանակաւ»: Օրինակները բազմաթիվ են՝ «...**Զիա ըդ** լինիցիմ առաջնորդ **այնոցիկ**՝ որք ոչ դառնայցեն զկնի տեառն, կամ **զիա ըդ** կայցեմ գլուխ ազգի, զորս եթող տէրն ի ձեռանէ: Կամ **զիա ըդ** բառնայցեմ զձեռս իմ աղօթիք առ Աստուած **վասն այնոցիկ**, որոց ձեռք իւրեանց շաղախեալ են արեամբ սրբոց տեառն. կամ **զիա ըդ** մատուցանեմք աղօթս պաղատանս **այնոցիկ**՝ որք դարձուցին զթիկունս առ տէր, եւ ոչ զերեսս իւրեանց: Կամ **զիա ըդ** եղեց բարեխօս **վասն այնոսիկ**, որք նուաճեցինն. կամ **զիա ըդ** խօսիցիմ ի հաշտութիւն

վասն այնոցիկ, ոյք փախուցեալն են...» (66), «Արդ վասն այսչափ ստութեանց ձերոց եւ պղծութեանց, **բարձգէ** տէր զթագաւորութիւնդ ձեր **ի ձէնջ. բարձգէ** եւ զքահանայապետութիւնդ **ի ձէնջ**» (66), «...են որք յայլ ի կապանս են, են որք ի փիւղակէս են, են որք յաքսորս, եւ են որք յայլ բռնութեան են ի զրպարտութեան ի հարկս եւ ի խոշտանգանս չարչարանաց» (160), «Վասն զի մանաւանդ **բագում** մշակք Տեառն խափանեալ կան, եւ **բագում** անդք ի դերեւ ելին, եւ **բագում** այգիք խոպանացան...» (160), «Իսկ Տէրն **կարող է** եւ առանց կերակրոյ պահել զմեզ կենդանիս, եւ **կարող է** տալ կերակուր. եւ արդարացուցանել **կարող է**. եւ արժանիս առնել...» (146), «...զի **այսպիսի** գործ գործեաց, կամ **զայսպիսի** քաջութիւն արարեալ, կամ **զայսպիսի** թշնամիս եհար եւ **զայսպիսի** պատերազմ մղեաց, կամ **այսպիսի**՝ ճակատու յաղթեաց եւ **զայսպիսի** անուն ստացաւ մեզ» (206), «Սոյնպէս եւ զօրքն արքունի **յիւրաքանչիւր** տունս **յիւրաքանչիւր** կայեանս **յիւրաքանչիւր** դադարս դադարեալ էին» (82), «Զի **ընդ** Ադանիս եւ **ընդ** Օոփս մեծ, **ընդ** Անգեղ տունն եւ **ընդ** գաւառն Անձտայ **ընդ** Օոփս Շահունոց, **ընդ** Մգուր գաւառն եւ **ընդ** Դարանաղէ, **ընդ** Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն... ասպատակեալ հեղեալ ծաւալէր...» (220), «Մանաւանդ **վասն** սրբութեան վարուցն նորա...եւ **վասն** աստուածախօս ջերմեռանդն աղօթիցն նորա, եւ **վասն** վարուց կարգաց պարկեշտութեանն. եւ կամ **վասն** աղքատասիրութեանն եւ **վասն** տառապելասէր վարուցն... կամ **վասն** բագում գիտութեանն: **Վասն** այսր ամենայնի նայէին ընդ նա **իբրեւ** առաքեալ Քրիստոսի, **իբրեւ** գիրեշտակ երկնաւոր...» (150) և այլն:

Բուզանդի լեզվում ավելադրություններն արտահայտվել են առավելապես հոմանիշների միաժամանակյա կիրառությամբ: Հոմանիշները տարբերվում են իրենց գործառական ոլորտով, սակայն դրանց երկանդամ, եռանդամ, երբեմն բազմանդամ շարքերի առատ գործածությամբ նկարագրվող երևույթը դառնում է չափազանց զգայացունց: Այստեղ ևս հեղինակը թանձրացնում է իրականության գույները: Օրինակ՝ «Ապա **կարգէր կազմէր պատրաստէր** զամենայն զօրսն Հայոց Վասակ զօրավարն...» (206), «Եւ յայնմ ժամանակի **վաղվաղակի փութանակի** չու առնէր յԱծուղ գեղջէն» (84), «Եւ կուտէր զօրս **անչափս և անթիւ և անհամար** իբրև գաւազ ծովու» (232), «Եւ տային ընդ միմեանս **մարտ պատերազմի...**» (18), «Ապա **չոգան գնացին հասին ի կայսերական պալատն...**» (126), «...**Շինեաց** սոյնպէս, **կարգեաց, կազմեաց և հաստատեաց...**» (120), «...Այլ յայնմ ամենայնէ **ուրացեալ հրաժարէր...**» (22), «...**քանդեալ բրէին** զերկիրն...» (226), «...և **արհամարհել կոխել** զամենայն անցաւորս» (132), «Եւ այնչափ **զայրացոյց գրգռեաց յուզեաց դրդեաց սրտմտեցոյց բարկացոյց** զթագաւորն Պարսից» (80):

Պակաս կարևոր չեն նաև անորոշ, ցուցական դերանուններով ու մակբայներով արտահայտված ավելադրությունները, որոնք նախադասության մեջ թարմատարի դեր ունեն և հաճախ անթարգմանելի են: Նման ձևերը ոճական-կառուցվածքային առումով սաստկական բնույթի են՝ «...Եւ անդ ոչ **ինչ** յետ բագում աւուրց հանգեալ...»

(52), «...Ձի դեռ **իմն** զգործ մշակութեան Աստուծոյ գործէր» (62), «...զորդահեղեղ **ինչ** անձրեւաց...» (54), «...նոքա երբէք **ինչ** ոչ գիտացին» (56), «Եւ ոչ այլ ոք ի նմին տանէ զաւակին Գրիգորի գոյր **ոք**» (58), «...Եւ զհետ նորա նորին նմանին չարչարեցին վասն նոյն **նորին** իրաց» (64):

Բուզանդի խոսքի արտահայտչականությանը մեծապես նպաստում է աստիճանավորումը: Աստիճանավորումը ոճական այն հնարն է, որի դեպքում իրար հաջորդող բառերը տարբերվում են իմաստի աստիճանական ուժեղացմամբ կամ նվազեցմամբ: Օրինակ՝ «**Տրտմէր, լայր ողբայր եւ կոծէր** մեծամեծ հեծեծանօք» (174), «...որ տկարագոյնք էին ի նոսա՝ սկսան **նքողել ծարաւել նուաղել եւ ներզնել դորսովել** ի քաղցոյ կամ ի ծարաւոյ» (144), «...եւ յետ այնորիկ **ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան** երկոքին կողմանքն» (246):

Պատահում է, որ Բուզանդը համադրում է բարձրացող և իջնող աստիճանավորումը մեկ նախադասության մեջ՝ «...**ամփոփեցաւ փոքրկացաւ**, եւ ի կուսէն **մարմնացաւ, մարդացաւ**, եւ **զանձն ունայնացոյց**. եւ **մարդ եղեալ...մեռաւ և յարեալ...**» (128):

Մյուս հնարանքը, որին երբեմն դիմում է Բուզանդը, չափազանցությունն է, որտեղ դրական վերաբերմունքի հետ մեկտեղ նկատելի է նաև հումորը: «Ապա եբաց Մանուէլ զամենայն զանդամս իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ եւ եցոյց զի քան **գղբամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա**՝ զոր խոցեալ էր ի պատերազմի. զի **յառնի յանդամսն աւելի քան զյիսուն սպի կայր վիրաց**. եւ զայն անդամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր» (392), «...եւ ունի գտիեզերս ի ձեռին իւրում եւ զամենայն բնակիչս նորա իբրն զմարախ, որ չափեաց զերկինս թգաւ եւ զերկիրս քլաւ իւրով, որ եղ զլերինս ի կշիռս և եբարձ զդաշտս կշորորօք... դեռ այժմ իսկ զարնելս եւ զմուտս, զհիւսիսի եւ զհարաւ եղեալ ի կշիռս, եւ դեռ զկշիռսն ի վեր ունի...» (300):

Խոսքը կարճ և հասու տոնայնություն է ընդունում, երբ հանդիպում ենք փոխանվանաբար գործածված օրինակների, որտեղ լրացում-լրացյալ կապակցությունը փոխարինվում է հասկանիշ արտահայտող մեկ բառով՝ լրացումով: Բսկ որքան զերծ ավելորդ բառերից, այնքան զեղեցիկ ու ճկուն, ինչպես՝ «...Սպանանել **զարդարն** ի տարապարտուց յանխնայ» (188), «Բսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն **սպանելոյն**» (190), «...ըմպել ազգիդ Արշակունեաց զյետին **բաժակն**» (188), «...եւ սիրես ողորմել **նեղելոց եւ տագնապելոց**» (302), «Անկանէր ի վերայ բանակին **քառասուն հազարաւ...**» (290), «Զհոգնոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին, առ **մեծամեծս** եւ առ **պատուականս** եւ առ **անարգս**, առ **հարուստս** եւ առ **աղքատս**, առ **ազատս** եւ առ **շինականս**» (126):

Բնության, իրերի ու երևոյթների, մարդկային հարաբերության ներքին հակասությունները՝ հոգեբանական-զգացական կողմերով, ի հայտ են գալիս հակադրական կազմություններում, որոնք ձևավորվում են ժխտական մասնիկներով ու հականիշ բառերով: Բուզանդը հակադրություններ է ստեղծում ոչ միայն հականիշ

բառերով, այլև բառախաղերի հետաքրքիր անցումներով: Այսպես՝ «...**ոչ** որ ի նոցանեն եւ **ոչ մի ոչ**, եւ **ոչ մի** բան, եւ **ոչ կէս** բանի, եւ որ դոյզն յիշատակ ինչ, եւ **ոչ** նշմարանս ինչ գոր լսէինն, եւ **ոչ** կարէին ինչ ունել ի մտի» (54), «Ետ իմիք **իշխել** եւ իմիք **չիշխել**» (132), «**սիրեաց** զհիւանդութիւնն եւ **ատեաց** զառողջութիւնս» (132), «Եւ որչափ **սիրէր** արքայն Արշակ զկինն, նոյնչափ **ատեաց** կինն զարքայն Արշակ» (192), «...յամենայնի **պակասեալք** եւ **ոչ կարօտեալք**» (132), «ումանց **ծնեալ**, եւ **ոչ սնուցեալ**» (132), «...**ծնեալ** եւ **ոչ արարեալ**» (134), «Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց **ի շէնս եւ յանշէնս**» (122), «Իսկ որք **ոչն լսենն**, եւ որք **լսենն**, պահէ նոցա Տէր զհատուցումն նորա» (136), «...եւ ոչ դոյզն ինչ **արմատ**, զի **անարմատ**, աւագ միայն էր...» (144), «...**զցայգ** եւ **զցերեկ** կային ի պաշտաման...» (148):

Բուզանդը նաև հրաշալի կերպարաստեղծ է: Ամեն հերոսին բնութագրելու համար առանձին լեզվական հնարքներ է կիրառում: Ստեղծում է կերպարներ՝ բնավորության, վարք ու բարքի ցայտուն կողմերով: Ասես զգում ու տեսնում ենք նախանձավառ Փառանձեմին, առաքինի Հուսիկին կամ նենգ ու եղբայրասպան Տիրիթին, կասկածամիտ ու տաքարյուն Արշակին և այլոց: Օրինակ՝ «...Այլ զազանացն առեալ զբարուցս, սկսար լինել մարդախանձ» (188), «Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր...» (182), «...զնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն» (192), «Իսկ Փառանձեմն ի մեծ նախանձու եւ յիտութեամբ զնայր ընդ Ողոմպինոյն» (192), «...այր ներքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին» (74): Համբաւ բառի կրկնությամբ, այլև ավելադրությամբ ինչպես է պատմում Փառանձեմի արտասովոր գեղեցկության մասին՝ «Եւ **համբաւ** գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, եւ **համբաւ** գեղոյ նորա յաճախեալ բազմանայր եւ հնչէր: Ապա **առ համբաւ** ցանկութեան նուանն տրփեալ լինէր մին ևս հօրեղբորորդին Գնէլոյ, որում անուն Տիրիթ կոչէր» և այլն:

Չափածո խոսքին հաստուկ ոճական այնպիսի հնարներ է օգտագործել, ինչպիսիք են առձայնությունը ու բաղաձայնությունը, վերջնահանգ կազմող տաղաչափական ռիթմը: Հնչյունների կուտակմամբ կամ միևնույն բառի զուգակցումներով աչքի են ընկնում հետևյալ օրինակները՝ «...եւ տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր», «...ի՜ և կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմութիւնք» (26), «...բիրաւոր բանիւք բարեօք...» (26), «...զի խստամբերութեամբ վարի ի վարս վաստակոց իւրոց» (342), «...թաւ է մարմնով եւ թուխ է գունով» (192), «...զինու եւ զարդու, ոսկւով եւ արծաթով. ջորեօք եւ ուղտօք» (304), «...վարժէր զանձն իւր դիօք եւ կախարդանօք» (328), «...աչօք բացօք իւրովք» (342), «...դարձան ի փախուստ, ցրուեցան, սփռեցան դաշտաց՝ լերանց բարձանց՝ խորոց ձորոց» (302) և այլն:

Ոճական երանգավորումը և հերոսների բնութագրումը կատարվում են ոչ միայն բառապաշարի միջոցով, այլ նաև քերականական այնպիսի ձևերի օգնությամբ, ինչպիսին չ մասնիկի ոչ սովորական գործածությունն է: Ոճականորեն չեզոք նույն երէց, եպիսկոպոս բառերը իմաստային երանգ են ստանում չերէց, չեպիսկոպոս

հակադրություններով՝ «...երեցն Սրջինիկ անուն, տալով յեկեղեցւոջն Ողիմպիայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ...», «...եւ յանօրէնն Փառանձեմայն պարգեւ առեալ **չերիցուն** զգեւդն...», «Իսկ իբրեւ ժամ աստենին հասանէր, առեալ կայսերն **զեպիսկոպոսն** Եւսեբիոս, եւ ընդ նմա երանելին Բասիլիոս երիցապետն, եւ երկու ախոյեանքն հակառակութեանն՝ որք ի կողմանէն կուսէ սատանայի էին. այս ինքն արիանոսք **չեպիսկոպոսքն...**» (154), «...յամենայն քաղաքս արիանոսս **չեպիսկոպոսս** յղէր.» (140), «...եւտ իմիք **իշխել**, եւ իմիք **չիշխել**» (132), «Ոմանց **ծնեալ**, եւ **ոչ սնուցեալ**» (132), «...յամենայնի **պակասեալք**, եւ **ոչ կարօտեալք**» (132):

Բնության, իրերի, մարդկային հատկանիշների դիպուկ ու պատկերավոր նկարագրությունը ստեղծելու առումով ևս Բուզանդն անգերազանցելի է: Մտորել բերենք բնագրային ուշագրավ նմուշներ՝ «հովիտսն թանձրախոտոն անտառին» (180), «Ապա տեսանէր զգեղեցկութիւն վայրեացն...եւ զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին եւ չարակնեաց» (180), «իսկ որք ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս...» (180), «...անկաւ նմա քուն ծանր թանձրամած» (152), «...խոժոռադէմ երեսօք տեսանէր...» (150), «...կաշառակործս կաշառաւեկս առնէր առհասարակ...» (142), «...անհնազանդիցն ժպրհութեանն պատիժք...» (136), «...ճարակ լինել նոցա անշէջ հրոյն յաւիտենից դատաստանին...» (136), «...դանդաշունս մտօք ...կապեն զամենեսեան...» (132), «...ն խանդակաթ այրեացն ողբումն...» (124), «եւ բազմացոյց զյորդաբուխ արդիւնս ի շտեմարանս արքայութեանն...» (118), «զհերսն զանգրագեղս զվայելուչ թագազանգուր վարսիցն...» (112), «քրիստոսեան գեղովն զարդարեալ...» (112), «...ցանկալի գեղով իւրով...եւ չնաղատես հերօք վարսից իւրոց...զարքունական սուսերն զպողովատիկն զոսկէպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն...» (110), «Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն» (78), «...անձկայրեաց արտասուակաթ ողբովք եւ ծանրաթախիծ հոգով...սգային» (44) և այլն:

Կարելի է «անձանձրոյթ» շարունակել այս հոգեզմայլ տողերը, որտեղ ընդգծվում են Բուզանդի անհատականությունը, նրա խոսքի հույժ զգացմունքայնությունը:

Այսպիսով, ի լրումն վերը կատարված սեղմ քննության, նշենք, որ ոճական արտահայտչամիջոցները, իբրև ոճական երանգավորում ունեցող լեզվական միավորներ, Բուզանդի երկում առանձնանում են կիրառական ինքնատիպ դրսևորումներով: Յուրաքանչյուր կառույց գորեղ է իր լեզվատոճական միասնությամբ, որ ներառում է նաև երանգներից ամենակարևորը՝ հոգեբանականը: Բուզանդը պատմական դեպքերի սոսկ արձանագրող չէ: Նա այդ ամենը սերունդներին է փոխանցում գեղարվեստական բարձրարվեստ հմտությամբ և ոճական արտահայտչամիջոցների իմաստային ու հուզական նրբերանգների վարպետ գործածությամբ:

Հավարտ, ուզում ենք բարձրաձայնել Մ. Մկրյանի կարծիքը, որ Բուզանդի

պատմությունն օժտված է գեղարվեստականությամբ և պատկերավոր է⁸, և ամեննին չհամաձայնել Վ. Առաքելյանի հետ, թե այս երկը զուրկ է հուզարտահայտչական լիցքավորումից ու պատկերավորումից⁹:

СТИЛИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА В
„ИСТОРИИ АРМЕНИИ„ ПАВСТОСА БУЗАНДА

ХАЧАТРЯН А. А.

Резюме

Павстос Бузанд является одним из известных летописцев V века, а его летопись – это своеобразное живое повествование, а не просто хронология исторических событий. “История Армении” П. Бузанда изобилует эпитетами («արեգակն արդարության» -солнце справедливости, «դառն մեղս» - горькие грехи, «պայծառ վարք» - “светлое” поведение), метафорами («ականջք արտիցն» - уши сердца, «աչք մտած» - глаза мысли, «ի թելս սուրբ Հոգւոյն» - на крыльях святого духа), сравнениями («Այլ կացցեն ի հաւատս անշարժ, իբրեւ զվէն» - как скалы будут крепки в своей вере, «զի էին իբրեւ զաստեղս երկնից, իբրեւ զաւազառ փին ծովու» - и были, как зв,зды в небе и песчинки на берегу реки), повторами («յիւրաքանչիւր տունս յիւրաքանչիւր կայեանս յիւրաքանչիւր դարարս դարարեալ էին» - в каждом доме, в каждой обители, в каждом пристанище). Использование этих стилистических средств придает повествованию необычайную экспрессию и эмоциональность.

⁸ Մկրտչյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Ե., 1976, էջ 168:

⁹ Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, էջ 161: